

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ· — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· — ՊԱՏՄԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843–1898 ՀԱՏՈՐ ԾԶ ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՎԱՆԱՑ ԾՈՎԱԿԻ ԿՂԶԻՆԵՐԸ

ԱՂԹԱՄԱՐ

(Շար· յէջ 321)

ՇՏԱՐԱԿԵՑԻ Տ· Ներսէս Ե կաթողիկոսի մահէն վերջ, 1857 թուի սեպտեմբեր 26ին, վերստին կը սկսի արծարծիլ Աղթամարայ հայրապետական խնդիրը։ Վանքի միաբան երեք վարդապետներ և մի քանի այլ աշխարհական պատգամաւորներ խնդրագիր կու տան առ ազգային Գերագոյն ժողովն, թախանձելով որ իրենց կաթողիկոս հաստատեն, և Վանայ առաջնորդի և իշխանաց ազդեցութենէն ազատեն իրենց վիճակը։

Աղթամարայ հայրապետական գահը բաւական ժամանակ թափուր մնալով և միաբանութիւնը և ժողովուրդը բարբարոս խատուտեանց ենթարկուելով անտանելի դրութեան մէջ կը գտնուէին, և այդ դրութենէն ազատելու յուսով, այն ինչ վերոյիշեալ խնդրագիրը կու տան առ ժողովն, պատասխան կ'ընդունին թէ կաթողիկոսութեան հաստատուիլը անհնարին է։ Բայց առանց յուսաբեկ լինելու նոյն տարւոյ հոկտեմբեր 10ին, առաջինէն աւելի բազմութեամբ նորէն ազերբաջիր կու տան, և միանգամայն կը սպառնան, որ ընդ փոյթ ընտրուի իրենց նոր կաթողիկոս մը։

Գերագոյն ժողովը խոհեմութիւն չի համարիր վերստին ասոնց խնդիրը մերժելը,

digitised by A.R.A.R.@

ուստի Պատրիարքի կողմէն թուղթ մը կը գրեն Աղթամարայ վիճակի ժողովրդոց։ Այդ թղթի մէջ կը յայտնեն իրենց որոշումն, թէ Աղթամարայ աթոռոյն արժանաւոր անձ մը պիտի ընտրեն և ղրկեն յաթոռն, բայց հաստատութիւնն առ ժամանակ մի պիտի յետաձգուի, մինչեւ Հայոց ընդհանուր կաթողիկոսն ընտրուելով՝ օծուի և հաստատուի, և ապա հաստատուի նաեւ Աղթամարայ հայրապետը։ Գերագոյն ժողովն յետ այս թղթով՝ Աղթամարայ յուզուած ժողովուրդը սակաւիկ մի հանդարտեցնելու, իսկոյն գումարում մը ընելով, Աղթամարայ աթոռոյն յարմար կը դատէ Աղրիանուպօլսեցի Յարգիս եպիսկոպոսը, որ նոյն ժամանակ հոգեւոր այցելութեան պաշտօնի կը գտնուէր յՈւլահոյուղտան (Մոլտաւիա–Վալաքիա), և իրենց որոշումը կը ներկայացրնեն Հոգեւոր ժողովոյն։ Երբ Հոգեւոր ժողովն ալ հաւանելով կը հաստատէ Գերագոյն ժողովոյ որոշումն, այն ժամանակ հրաւիրանաց թուղթ կը գրեն առ Յարգիս եպիսկոպոսն, յայտնելով իրեն համար որոշուած բարձր պաշտօնը։

Այս որոշողութիւնն իմանալով Աղթամարցիք՝ մեծապէս կ'ուրախանան, որ վերջապէս յետ երկար բանագնացութեանց արժանաւոր եպիսկոպոս մը պիտի բազմի իրենց հայրապետական գահը, և անհամբեր կը սպասեն Ցէր Յարգիս եպիսկոպոսի գալստեան։ Բայց դեռ ժամանակն հասած չէր, և այդ կաթողիկոսութեան հաստատութիւնը դեռ երկար խընդիրներու նիւթ պիտի դառնար։ Աղթամարցիք տեսնելով, որ իրենց նոր ընտրուած հայրապետն կը յապաղէ Կ. Պոլիս գալու, որ անկից ալ իր գահը երթայ, յունուար 10ին (1858) կը դիմեն առ ազգային Գերագոյն ժողովն և իրենց անհանգստութիւնը կը յայտնեն։ Այդ պատճառաւ երկրորդ հրաւիրանաց թուղթ մ'ալ կը գրուի առ վերոյիշեալ եպիսկոպոսն, որուն պատասխան կ'ընդունին, թէ անձնական տկարութիւնք զինքը կ'արգելուն Աղթամարայ հայրապետական գահը բարձրանալու։ Այս մերժողական պատասխանէն վերջ Գերագոյն ժողովն Աղթամարցոց խնդրանաց համեմատ, Հոգեւոր ժողովոյն կ'առաջարկէ կաթողիկոսացընել Ռոտոսթոյի առաջնորդ Տ. Թադէոս եպիսկոպոսը. իսկ Հոգեւոր ժողովն օրինաւոր պատճառաւ մերժելով այս առաջարկն (4 փետր. 1858), կ'որոշեն որ Աղթամարայ միաբան Պետրոս եպիսկոպոսն ընտրուի կաթողիկոս։ Այս որոշումը ընելէ վերջ՝ կ'առաջարկուի Աղթամարցոց, որ եթէ յարմար կը գտնին նոյն եպիսկոպոսը և կ'ընդունին, փութան բազմակնիք ստորագրութեամբ մասնաւոր աղերսագիր մը տալ առ ժողովն։ Կ. Պոլիս գտնուող Աղթամարայ վարդապետք և երեսփոխանք անմիջապէս երեք օր վերջը փետրուար 7ին, Պետրոս եպիսկոպոսի արժանաւորութեան նկատմամբ պահանջուած աղերսագիրը կը ներկայացրնեն ժողովոյն։ Գերագոյն ժողովն ալ կարդալով այդ աղերսագիրը՝ կ'որոշէ որ պատրիարքական կոնդակ գրուի նոյն եպիսկոպոսի անունը, և արքունի հրովարտակ ձեռք բերելու համար պէտք եղած աղերսագիրը պատրաստուի։ Այս միջոցին Հոգեւոր ժողովն ալ մասնաւոր պայմանագիր մը կը պատրաստէ Աղթամարայ կաթողիկոսի և ժողովրդոց համար։ Վերջապէս 1858 տարւոյ մարտ 14ին կը գումարուի ընդհանուր ժողով, և զանազան կարեւոր խնդրոց նկատմամբ որոշումներ ընելէ վերջ, մէջտեղ կ'ելլէ նաեւ Աղթամարայ կաթողիկոսութեան անվերջ խնդիրը։ Կը կարդացուի ի ներկայութեան Աղթամարցոց Հոգեւոր ժողովոյն պատրաստած պայմանագիրն և պատրիարքական կոնդակն, և կ'որոշուի որ նախ այդ պայմանագրութեան ստորագրեն ներկայ գտնուող Աղթամարցիք և իրենց նորընտիր կաթողիկոսը, և ապա տրուի իրենց արքունի հրովարտակը և պատրիարքական կոնդակը։ Պայմանագիրն գլխաւորապէս կը պարունակէր տասն զանազան պատուէրներ, զորս եթէ ոչ ամբողջովին, գէթ համառօտիւ ի մէջ բերենք։

Ա. Կ. Պոլսոյ Պատրիարքի կոնդակով սահմանուած կանոնները (նկատմամբ կաթողիկոսի, վարդապետաց և ժողովրդոց), անխախտ պահել. և Աղթամարայ վիճակին վանօրէից, եկեղեցեաց և գպրատանց բարեզարդութեան

digitised by A.R.A.R.@

ճգնիլ և գիտութիւնները ծաղկեցընելով՝ բարի վարուց մէջ կրթել զազգն։

Բ. Աղթամարայ կաթողիկոսը պէտք է ճանչնայ Էջմիածնի կաթողիկոսը վեհագոյն քան զինքը և անոր հպատակի։

Գ. Աղթամարայ կաթողիկոսը ինքնակամ չձեռնադրուի, այլ հաւանութեամբ պատրիարքական ժողովոյն և հաստատութեամբ ազգին ընդհանուր հայրապետին։

Դ. Պէտք է Մայր Աթոռոյ անօրինման և ըստ այնմ կամ հոն երթայ ձեռնադրուելու, և կամ անկէց զրկուած եպիսկոպոսներէն ձեռնադրուի յԱղթամար։

Ե. Եթէ կաթողիկոսի վրայ ամբաստանութիւն կամ բողոք լինի և կանչուի ի Կ. Պոլիս, անչղող չդտնուի։

Զ. Իրաւունք ունենայ սուրբ Մեռոնը օրհնելու։

Է. Իւր վիճակի մէջ անուամբ յիշուի Ամասցուքի և Ս. Պատարագի մէջ՝ իւր սարկաւագներէն և պատարագիչ քահանաներէն. իսկ երբ ինքն պատարագէ՝ անպատճառ յիշէ զկաթողիկոսն Էջմիածնի։

Ը. Հաստատէ ժառանգաւորաց դպրոց և հոգ տանի անոր պայծառութեան, և առանց հաւանութեան զիր ընդունելու Կ. Պոլսոյ Պատրիարքէն, բնաւ քահանայական ձեռնադրութիւն չիատարէ։

Թ. Թէ՛ կաթողիկոսն և թէ՛ եպիսկոպոսունք երբեք Աղթամարայ վիճակին չպատկանողներէն չձեռնադրեն։

Ժ. Պէտք եղածէն աւելի քահանայ չձեռնադրել. և բոլոր վիճակի մէջ գտնուած քահանայից և կրօնաւորաց անուանքը, տարիքները, որ վանքի կամ եկեղեցւոյ վերաբերելին՝ կարգաւ արձանագրելով զրկել Կ. Պոլսոյ Պատրիարքարանը։

Մարտ 17ին ամենայն հաճութեամբ կ'ընդունին այս պայմանները Աղթամարայ միաբանք, երիցունք և ժողովրդականք, և գրով կը խոստանան պահել պահպանել միշտ անթերի և անայլայլ. և ի հաստատութիւն իրենց խոստման՝ իւրաքանչիւր ոք ըստ կամաց ժողովոյն, կը ստորագրէ և իւր կնքով կը վաւերացընէ հետեւեալ կարգով.

Ղազար վարդապետ	տեղի կնքոյ
Գրիգոր վարդապետ	»
Ցէր Պօղոս Մակացի	»
Օտապաշի վնտ. Մարտիրոս Պարգիսեան	»
Թոռման Գրիգորեան	»
Սարգիս Մխիթարեան	»
Ղազար Յակոբեան	»
Շատաղցի Յովհաննէս	»
Աւետիս Սարգիսեան	»
Յովհաննէս Մինասեան	»
Մոռբատ Կարապետեան	»
Աստատուր Հարթինեան	»
Աստատուր Խատուրեան	»
Մ. Գասպար Մարգարեան	»
Խաչատուր Յովհաննէսեան քէնտար	»
Աբրահամ Ցէր Ծիսանեան	»
Սարգիս Աւետիսեան	(մատնանիշ)
Փոռկապանցի վնտ. Յոհան	»
Վարդան Յակոբեան	»
Յոհան Դաւիթեան	»
Միքայէլ Մարկոսեան	»

Այս ստորագրողաց մէջ, ինչպէս կը տեսնենք, կը պակսի նոր ընտրուած կաթողիկոսի անունն. անշուշտ նոյն պահուն ի Կ. Պոլիս չգտնուելով, առանձին նամակաւ ընդունած է վերոյիշեալ պայմանագիրը։ Պայմանագրի ստորագրութիւնք աւարտելէ վերջ, մարտ 28ին Գերագոյն ժողովն կ'որոշէ և առանձին թուղթ մը գրելով առ հոգեւորականս և ժողովուրդս Աղթամարայ, կը յայտնէ թէ նորընտիր կաթողիկոսն Պետրոս Պիւլպիւլ առ ժամս չօծուի, մինչեւ ընտրուի և օծուի ազգին ընդհանուր կաթողիկոսը։ Մայիս 17ին (1858) կ'ընտրուի Հայոց ընդհանուր կաթողիկոս Տ. Մատթէոս արքեպիսկոպոսը, և 1859ին օգոստոս 15ին կ'ընդունի հայրապետական ձեռնադրութիւն և օծումն։ Բայց հակառակ Կ. Պոլսոյ ազգային կրկին ժողովոց որոշման և պայմանագրութեան, Պետրոս եպիսկոպոսը, ազգին ընդհանուր հայրապետի ձեռնադրութենէն առաջ, շատ խոտորութիւններէ վերջ կը կաթողիկոսանայ Աղթամար յուլիս 24ին (1858)։ Վանէն Կ. Պոլիս հասած օգոստոս 2 թուականաւ նամակ

digitised by A.R.A.R.@

մը մանրամասն կը նկարագրէր այն ամենայն շփոթութիւնքը և խռովութիւնքը, որ տեղի ունեցեր են յԱղթամար՝ Պիւզպիւզ եպիսկոպոսի ձեռնադրութեան առթիւ։ Այդ նամակէն հաստատուեցաւ հետեւեալները «Կ. Պոլսէն կաթողիկոսութեան կոնդակ և հրովարտակ հասերին առած վան կը հասնին Աղթամարայ վարդապետք, և կարդալով զայնս Վանայ ազգային ժողովոյն դիմաց, կը ստիպեն զժողովականս և փոխ-առաջնորդ Պօղոս[1] Հայր սուրբին, որ հրաման տայ Խիմնայ Մարգար եպիսկոպոսի, երթալու յԱղթամար և կաթողիկոս օծելու զՊիւզպիւզ։ Իսկ Վանայ առաջնորդարանն կանխաւ գիտնալով Պատրիարքարանի պատուէրը, բացարձակապէս կը մերժէ Աղթամարցոց խնդիրը, որք խոժոռեալ դիմօք կը դառնան ի կողմն։ Նոյն ժամանակները Վան գտնուելով Եղեսեան Տէր Յովհաննէս եպիսկոպոսը, կ'երթայ Աղթամար և կը քաջալերէ գմիաբանութիւնն որ փութով օծեն իրենց կաթողիկոսը. և երբ Պետրոս Պիւզպիւզ, գիտնալով ազգային եկեղեցական վարչութեան կամքը և պատուէրը չուզէր օծուիլ, կը սկսին բռնութեամբ վարուիլ նորա հետ։ Եղեսեանը տեսնելով որ Պետրոս չի զիջանիր, կը յորդորէ միաբանութիւնը որ իրեր լինի կաթողիկոս։ և մինչ կը ստիպեն զՊետրոս որ զնդեսեան օծէ, և նա ալ կամայ ակամայ խօսք կու տայ, Հայոց-ձորեցիք, Զուրստանցիք և այլք՝ խռովութիւն հանելով չեն ուզեր որ Եղեսեանը բազմի Աղթամարայ գահը։ Այն ժամանակ Պետրոս Պիւզպիւզ բռնադատեալ կը զիջանի օծուելու, բայց Եղեսեանը կ'ըսէ, թէ «Ես հիւր եկած եմ հոս՝ չեմ կրնար օծել». իսկ երբ կը բռնանան կը յաւելու, թէ «Մէկ եպիսկոպոս չի կրնար կաթողիկոս օծել, հրաման չկայ». խօսակցութիւնն երթալով տաքնալով և նախատական կերպարանք առնելով՝ ներկայ գտնուող ժողովուրդն ատտիկ բարկացած կը բռնեն զԵղեսեան և մինչեւ ցմահ կը ծեծէին, եթէ մահտեսի Յոհան և Ատոմ ամբոխի ձեռքէն չազատէին, որ քանի մը օր վերջը ճամբայ կ'ինկնայ զկա ի Կ. Պոլիս»։

Այս խռովութիւններէ վերջ յուլիս 24ին Պետրոս Պիւզպիւզ մէկ եպիսկոպոսով կաթողիկոս կ'օծուի և երկու օր վերջն ալ, իւր միաբանութենէն Յակոբ խաչատուր և Ղազար վարդապետները եպիսկոպոս կը ձեռնադրէ։ Պետրոս յետ այս ոճով Աղթամարայ գահը բարձրանալու, հազիւ վեց տարի կը մնայ իւր աթոռոյն վրայ, և զոհ կ'ըլլայ իւր ձեռնադրած խաչատուր եպիսկոպոսի փառամոլութեան։ Նոյն այդ խաչատուրն եպիսկոպոսական ատիճան առնլուն հետ, մտաբերեց գահընկէց ընելով Պիւզպիւզը՝ կաթողիկոսական ատիճանի բարձրանալ։ Այդ նպատակաւ բնածին խորամանկութեամբն և որ և է կերպով դիզած ոսկիներովն՝ ամենայն միջոց ի գործ դրաւ իր կողմն օրաւոր միաբանութիւնը և իշխանները. Պետրոս կաթողիկոսի ալ անկարողութիւնն և պաշտաման անվայել կեանքն և մի քանի սխալ քայլերն՝ իւր նպատակին հասնելու ժամանակն աւելի փութացուցին։

1864 տարւոյ հոկտեմբեր 15ին Կարմէն Կ. Պոլիս հասած հեռագիր մը կը ծանուցանէր, թէ «Աղթամարայ Տ. Պետրոս կաթողիկոսն սպանուեր և տեղը խաչատուր եպիսկոպոսը դրուեր է[1]»։ Թէեւ հեռագիրն կատարուած եղեռնագործութեան վրայ մանրամասն տեղեկութիւն չէր տար, բայց խաչատուր եպիսկոպոսի փառամոլութեան և խրամանկութեան գիտակ անձինք, կրնային գէթ կասկածել թէ այդ տխուր գործոյն պատճառն ով էր, որուն սատանայական արդարեւ ոչ միայն Աղթամարայ, այլ և ազգային եկեղեցական պատմութեան մեծ անպատուութիւնն կը հասնէր։

Շատ օր չանցնիր՝ հոկտեմբեր 3 թուականաւ Վանէն նամակ[2] մը կը հասնի Կ. Պո-

---

1. Պօղոս Հայր սուրբը միաբան էր Կարուց անապատի, որ յետ վախճանի Վանայ առաջնորդ Տ. Գաբրիէլ եպիսկոպոսի, ինքն առ ժամանակ մի փոխ-առաջնորդ եղած է, և է վերջոյ ըրած է նաեւ վանահայրութիւն իւր միաբանութեան։

1. Տես Մասիս 1864, թիւ 662։

2. Այդ նամակն հրատարակուեցաւ Մասիսի 664 թուոյն մէջ։

digitised by A.R.A.R.@

լիս, յորում մանրամասն նկարագրուած էր Խաչատուրի ինչ ոճով կաթողիկոսանալու և Պետրոս կաթողիկոսի զանազէտ մահուան պատմութիւնն։ 1864 տարւոյ սեպտեմբեր 10ին, Խաչատուր արդէն զոմանս ոսկւոյ զօրութեամբ և զայլս ուրիշ միջոցներով՝ իր կողմն գրաւած լինելով և իւր նպատակին հասնելու ժամանակն մերձեցած տեսնելով, Աղթամարէն դուրս Նարեկայ վանքի մէջ իւր կուսակից եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից և մի քանի իշխանաց հետ կը գումարէ թեմական ժողով մը. յորում, ինչպէս թուի, կ'որոշուի հրաժարեցնել (կամ յաշխարհէ բառնալ) զՊիլպիպիւ և կաթողիկոսական գահը բարձրացնել զնոյն ինքն Խաչատուր։ Այս լաւ դիտելու է, որ Խաչատուր իր կողմն օրաց՝ ած էր նաեւ Ռշտունեաց և Մոկաց գաւառներու տէր Տէրմիրշ պէյը և նորա արքունակիցը, և ամենայն ինչ կարգի դրած և հրահանգներ տուած էր Պիլպիպի նկատմամբ, որ չլինի թէ իր նպատակին հասնելու արգելքներ ելնեն։ Մեր յիշած նամակէն քաղենք հետեւեալը՝ որ Նարեկայ վանուց ժողովէն վերջը կը պատահի. « ... Խաչատուր եպիսկոպոսը ուրբաթ օրը իր մարդոց հետ նաւակով մը Աղթամար կղզին անցնիլ կ'ուզէ։ Պետրոս կաթողիկոսն անոր միտքն իմանալով (փշաղանք գիւզէն իջնելով Աղթամարայ նաւահանգիստը), անձամբ դէմ կը կենայ և նաւը մնալով արգիլելու կ'աշխատի, բայց Խաչատուր եպիսկոպոսին մարդիկը զայն կը բռնեն և նաւէն դուրս կորզելով արիւնաթաթաւ աւազի վրայ կը ձգեն։ Իսկ Խաչատուր եպիսկոպոսը առապաստները բացած Աղթամարայ կղզին կը հասնի, վանքը կը մտնէ և հոն իր կամակից եպիսկոպոսներն և միաբաններն զինքը կաթողիկոս կ'օծեն։

« Այս լուրը նոյն օրը Վան հասնելով, վիճակին առաջնորդ Գեր. Տ. Իգնատիոս Ս. արքեպիսկոպոսն անմիջապէս Վանայ վեմ. կառավարչին կ'իմացնէ, և այս ապօրինաւոր գործն արգելուլ կը խնդրէ։ Փաշան ալ քանի մը զինուորներով հարիւրապետ մը կը դրկէ Աղթամար, բայց մինչեւ անոնց հոն հասնին ամէն բան լմնցած էր»։

Իսկ Պետրոս եպիսկոպոսն բաւական ժամանակ արիւնաթաթաւ և ուժասպառ աւազի վրայ մնալէ վերջ, որոյ մասն կար միայն Ցնկոբ վարդապետը, կը փոխադրուի Փշաղանք գիւղը իւր եղբօրորդւոյ տունը։ Եւ երկու օր վերջը, կէս գիշերին, ըստ կանխատեսեալ հրահանգաց, Տէրմիրշ պէյի որդին Կիւլիխան, հեռատած երկու քրդեր՝ Շահէն և Խաչատուր եպիսկոպոսի սպասաւոր Եուսուֆը, կ'ելնեն Պետրոս կաթողիկոսի տան երդիքը, և նորա պատկած պահուն կրկին հրացաններու քաշեակ գնդակօք մէկ վայրկեանի մէջ կ'անշնչացընեն փաստմոլութեան թշուառ զոհը։

Նոյեմբեր 7ին Մասիս լրագիրը կը հրատարակէ հետեւեալ պաշտօնական զեկուցումը։

« Աղթամարայ վանից միաբան Խաչատուր եպիսկոպոսը առանց ազգային կեդրոնական Վարչութեան հաւանութեանը ինքզինք Աղթամարայ կաթողիկոս անուանելուն համար՝ կրօնական ժողովը պարտը համարեցաւ ի պաշտօնէ հրատարակել, որ անոր ընտրութիւնն անվաւեր և անընդունելի է ընդհանուր ազգին»։

Այս զեկուցագրէ վերջ ազգային Վարչութիւնն Բ. Դրան ազդեցութեամբ քննութիւններ ընել կու տայ Վանայ կառավարութեան ձեռօք, որ ի յայտ գան և պատժուին այդ սպանութիւնը կատարողները։ Երկար, շատ երկար տարիներ կը տեւէ այս կնճռոտ խնդիրը, քանի՛ քանի անգամներ բանտարկութիւններ կը լինին Պարիսարքարանի և Բ. Դրան մէջ, քանի՛ քանի ժողովներ կը գումարուին, և վերջապէս ճշմարտութիւնն դուրս չելներ։ 1868 տարւոյ հոկտեմբեր 12ին Խաչատուր կաթողիկոսը կը հարկադրուի Կ. Պոլիս երթալ և երկար ժամանակ հոն մնալէ վերջ, հուսկ ուրեմն կը յաջողցընէ իւր գործը, և փետրուար 16ին (1876) խոստմնագիր մը կու տայ առ կրօնական ժողովն՝ որ հինգ յօդուածներէ ձեւացած էր և կը վերջանար այսպէս.

« Զվերոյգրեալ հնգեսին յօդուածս ընդունիմ սրտի մտօք և խոստանամ գործադրել ընդ բոլոր կեանս իմ»։

Խաչատուր կաթող'ոկոս Հայոց
Տ.ամն Աղթամարայ

digitised by A.R.A.R.@

ի հաստատութիւն այդ պայմանագրի կը ստորագրէ և պատրիարքական կնքով կը վաւերացնէ Կ. Փոլոյ Հայոց Պատրիարք Տէր Ներսէս արքեպիսկոպոսը։ Տ. Խաչատուրի այս խոստմնագիրը տալէ վերջ, դեռ քանի մը ժողովներ ալ կը գումարուին նոյն խնդրոյն նկատմամբ, և վերջապէս նոյն տարւոյ յունիս 4ին ազգային ընդհանուր ժողովոյ չորրորդ նիստով, յետ 12 տարիներու կը վերջանայ խնդիրն, առանց մէջտեղ ելնելու ճշմարտութիւնն։ Ժողովն կը վաւերացնէ Տէր Խաչատուրի կաթողիկոսական ընտրութիւնը և Բ. Դանէն մանաւոր հրովարտակ և Մէ-ձիտիէյի առաջին կարգի պատուանշան կ'տուն անոր համար։ Այնուհետեւ Տ. Խաչատուր մեծ ուրախութեամբ 1876 տարւոյ հոկտեմբեր 20ին ճամբայ կ'ելնէ դէպ ի Աղթամար, ուր հասնելով մեծ շքեղութեամբ և հանդէսներով կ'ընդունուի իւր կուսակիցներէն։

Սա ամբողջ 21 տարի նստած է կղզւոյս հայրապետական գահն, և եթէ իւր ունեցած քաղաքագիտական հմտութիւնը և միւս յատկութիւնքը՝ միաբանութեան և ազգին բարւոյն և յառաջադիմութեան գործածէր, այսօրուան օրս Աղթամարը մեր աշխարհի ծաղկած և առաջնակարգ վանքը կը դառնար, այլ աւելի որ բոլորովին հակառակն պատահեցաւ։ Այդչափ տարիներու մէջ ինչո՞ւ չունենար Աղթամար իր վարժարանները, իր տպարանն, իր ամսաթերթն, իր մատենադարանն, իր գիտական վարդապետները և նոցա մատենագրութիւնքը։ Այդ ամէնը կատարելու համար, շնորհիւ վանքի սեփական շատ մը կալուածոց, նիւթական միջոցներն ալ չէին պակսիր։ Շոշափելի խաւար մը պատած է այդ հռչակաւոր կղզւոյ այժմեան միաբանութեան վրայ, և հարկ է լուսոյ ազդու ճառագայթ մը լուսաւորէ զամենն։ Մի միայն ազգային կեդրոնական վարչութիւնն կրնայ ատոր զարմանն տեսնել, մենաստանի վանահայրութիւնը կամ առաջնորդութիւնը յանձնելով գիտնական և լուսաւորեալ գաղափարով անձի մը, որ սկսի գէթ ապագայ յաջողութիւնը կրթել և ուսուցանել ներկայ ժամանակիս պահանջածի համեմատ։

Խաչատուր կաթողիկոսի մահուան առթիւ յօդուած մը հրատարակուելով Արեւելք[1] օրագրի մէջ, նորա կենաց իբրեւ յիշատակաց արժանի բան մը կը յիշուի շինարարութիւնն, շէնք շինելու տենչը. վանքի վերաբերեալ կալուածոց վրայ ուր որ երթար, ախոռ շինելու կը բարեհաճէր, և պարծանօք գինքը շրջապատողաց կ'ըսէր՝ թէ «Երկու բանի շատ մտադիր (փափաք) ունիմ, մէյմը եւափոյի (շէնքի) և մէյմը գիր գրելու»։ Երանի՜ թէ շէնք շինելու փափաքին հաւասար լինէր նաեւ գիր գրելունը, կենացը մէջ կատարեալ գիրք մը գրած չէ բաց ի կոնդակներէն և նամակներէն։ Միայն իւր վարքը գրել տուած է Յովսէփ Վ. Յովհաննէսի, իր ուզածին պէս, որով և գինքը չի պատկերացներ։ Ցարութիւնքով առաջ շինել տուաւ նաեւ իրեն համար փառաւոր գերեզման մը տապանագրով[2] և քանդակազարդ։

Խաչատուր կաթողիկոսի կենաց վերջին աւուրց մէջ 1895 տարւոյ դեկտեմբեր 19ին՝ առ Դեր. Իզմիրլեան Պատրիարքն ուղղած մի տեղեկագրէն[3], յորում՝ նկարագրած էր մեր աշխարհի հանրածանօթ սարսափելի պատահարներն, լաւ կը տեսնուի թէ ինչ ատիճանի զղջացած է նա իւր 21 տարուան պաշտօնավարութեան ժամանակ՝ ի միաս ազգին առ օտարս մատուցած ծառայութեանց վրայ. բայց իւր այդ ցաւն և զղջումն նոյն պահուն,

---

1. Արեւելք 1896 տարի 17 յունուար։

2. Ուզելով ծանօթացընել ընթերցողաց նաեւ այդ տապանագիրը և ուրիշ մի քանի կարեւոր տեղեկութիւններ, մասնաւոր յանձնարարեալ նամակաւ դիմած եմք Աղթամարայ միաբանութեան, բայց դեռ պատասխան մը ընդունելու բարեբախտութիւնը չունեցանք։

Մեծապէս երախտապարտ պիտի մնամք ազգային այն բարեսէր անձանց, որք ի մտուստ կամ ի հեռուստ տեղեկութիւնք ինչ ունենալով Վանայ ծովակի անապատաց վրայ, բարեհաճին ծանօթացընել մեզ, ինչպէս նաեւ նոյն վանքերուս արդի վիճակագրութիւնը։

3. Այդ տեղեկագիրն առաջին անգամ հրատարակուեցաւ Արարատ ամսագրի 1896 տարւոյ մայիսի տետրին մէջ։

digitised by A.R.A.R.@

այլ եւս չէին կարող սրբել զարտասուս այնչափ անմեղներու, և բուժել այնչափ մահացու բացուած վէրքերն։ Նա մեռաւ, չեղաւ մէկն որ զինքը ողբայ, բաց ի մի քանի իւր ձեռքով զանազան պաշտամանց բարձրացած անձանց։

Այժմ Աղթամար, ձախորդ պարագաներ։ Հնորհիւ դեռ կը շարունակէ յիսադիմել խաւարի մէջ, կաթողիկոսութեան ընտրութիւնն ալ, հակառակ ըղձից թեմականաց, թակայ եղած է զանազան արգելից և խոչընդոտից։ Ս. Արքէն, հանգուցեալ կաթողիկոսին անձինքներէն մին, ինչպէս կաթողիկոսաց շարքի վերջաւորութեան մէջ ըսինք, տեղապահ կարգուած է նոյն վանքին, յորմէ կ'են թադրուի թէ Աղթամարայ զարգացման և յառաջադիմութեան բաղձալի ժամն դեռ հասած չէ։

Հ. ՍՈՒՔԻԱՍ ԷՖԵՐԻԿԵԱՆ

Շարայարելի

ՀԱՅՔ ԳՈՒՔԵՐԱՑ

(Շար. տես յէջ 387)

1650 տարուէն, Լեհացի Հայք իրենց զօրութեան և զարգացման զենիթը զրեթէ կոխած են։ Իրենց յետադարձը աւելի արագ և սաստկագոյն է քան զհասարակաց անկումն լեհ քաղաքականութեան և քրիստոնեայ—քաղաքացի տարեր։ Գոզաքներու պատերազմները, Թուրքաց ահաւոր պաշարումները խորին վէրքեր տուին Լեհ և Ռուսէն ազգայ կազմակերպութեան, բայց արտաքին վտանգանութիւն ընող Հայոց համար՝ այս վէրքերը զրեթէ ուղղակի մահացու էին. վասն զի արուեստից հետ վաճառականական յարաբերութիւնը վերցուելով իրենց կենաց ջիղը կտրեցաւ։

Նոր տնական տուրքերու ներմուծմամբ 1731էն՝ փոխանակ 89 արաօնացեալներու կը գտնենք միայն 71 հայ տանուտէրներ նշանակուած։ Երբ այսպէս հաստատուն կերպով անշարժ ստացուածք ժառանգողաց թիւն քառորդի մը իջաւ, հոչափ մեծ պէտք էր ըլլալ՝ օրական շահուն պարապող անոնց վաճառականաց ամբոխին, փերեզակաց և արուեստագիտաց, գործակալաց և միջնորդաց կորուստն։ Հայ գայթակղութիւնը ի Եարոսլաւ, Բրոտի, Զլոբցով, Եազլովից ջրնջուեցան ԺԸ դարուն մէջ։ Ազգային լեզուին օրէ օր փոխանակեց լեհերէնին գործածութիւնը. դատաստանական մուրհակք ԺԷ. դարուն մէջ մեծաւ մասամբ լեհերէն գրուեցան. ինչ ժամանակ նախկին հայ դամբանը լեհացի տառերով, 1600 թուականին է. իսկ հայերէն դամբանագրով ամենայտիսինը ի Լեմկերկ՝ ըլլալու է դամբան 1686ին մեռնող՝ յԱստապատէն եկած, հետեւաբար հոս չհաստատուած, Յովհաննու, որ էր որդի Տոլմաթաւոր (հարուստ) Թոնա Նաւասարդին։ Ի դաւառին կը պահուէր դեռ ռամկին մէջ հայերէն լեզուն լեհերէնին հետ, մինչեւ մեր դարուն առաջին տասը տարիները. ամենավերջին յիշատակարանն համարուելու է ի Եազլովից՝ տարիներով առաջ փորելով գրուած 1807 (!) տարուոյն մահարձան մը։

Ընտարակոյս շատ ընտանիքներ՝ կրօնական պատճառներով, բազմամեայ՝ արտաքոյ կարգի սրամիտ Թորոսովիչի հետ հակառակութենէ յոգնած, զէպ ի արեւելք ի Պուքովինա և ի Վալաքիա քաշուեցան, և ապահովապէս հետզհետէ ի Լեմպերկ փերեզակաց խանութներ յաւէժարար գոցուեցան, և վաճառականք դժկամակութեամբ թողուցին յառաջագոյն այնքան հիւրասէր աշխարհ մը։ Սակայն շատ գիւրակեաց մարդիկ, մեծամեծ Հայ—ուղղափառ ընտանիքներ, ազնուականացեալք, տանուտեարք, երկրին մէջ մնացին։ Լեհաց հետ յարաբերութեան մէջ մարժեցան, և կը խնամենային, զէթ միայն մասնական դիպաց մէջ, տեղացի ընտանիքներու հետ։ Հոն իրը վաճառական չգտան աւելի եկամուտ մը, փոխեցին ստացուածքնին, փոխանակեցին կամաց կամաց հայկական բարձր գլխանոցները՝ տեղացւոց լայն եզերքով յարդեայ գլխարկներու հետ։ Փոտոլիոյ կարմիր ցորենը նախասիծաբ համարեցան քան Հա-

digitised by A.R.A.R.@